ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA
EU4Business

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT
giz

ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագիր

Համաֆինանսավորված է Եվրոպական միության և Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից

Իրականացվում է Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ) կողմից՝ «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի ներքո

Դիմողների ձեռնարկ

Առաջարկների հայտարարություն

«ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության «Covid-19-ի պայմաններում նորարարական տուրիզմին ուղղված դրամաշնորհների» մրցույթ

Բովանդակություն

I. Ծրագրի նկարագրություն 3
II. Դրամաշնորհային սխեմայի նպատակն ու թիրախային խումբը 5
III. Դրամաշնորհի չափը 5
IV. Համապատասխանության պահանջներ և թույլատրելի ծախսեր 7
V. Հիմնական ֆոկուս ոլորտները և գնահատման չափանիշները 9
VI. Ներկայացման պահանջները 10
VII. Դրամաշնորհի սխեմայի ժամանակացույցը 12
VIII. Առաջարկների ընտրության գործընթաց 12
IX. Պայմանագրի կնքումը, ֆինանսավորման և վճարման եղանակները 13
X. Ծրագրի իրականացում, հաշվետվություն և մոնիտորինգ 14
Հավելված 1. Ծրագրի նկարագրության ներկայացման ձև 15
Հավելված 2. Բյուջեի ներկայացման ձև 15
Հավելված 3. Ինքնահայտարարագրման ձև 15

Ծրագրի անվանում. ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության «Նորարարական տուրիզմ և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար»
Թեմա. «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության «Covid-19-ի պայմաններում նորարարական տուրիզմին ուղղված նպատակային դրամաշնորհների մրցույթ»
Առաջարկների հայտարարության մեկնարկի ամսաթիվ. հունիսի 8, 2020 թ.
Առաջարկների հայտարարության փակման ամսաթիվ. Հունիսի 28, 2020 թ.

I. Ծրագրի նկարագրություն

ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագիր

Ամփոփ նկարագիր. ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագիրը մեկնարկել է 2019 թ. նոյեմբերին և կշարունակվի մինչև 2023թ. ապրիլը: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից: Այն իրականացվում է Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ) կողմից՝ «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» բազմաբաղադրիչ ծրագրի ներքո: Ծրագիրը հաղիսանում է Եվրոպական միության ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության (www.eu4business.eu) մաս:

Ծրագրի ընդհանուր նպատակն է ապահովել միասնական, հավասարաչափ և համապարփակ աճ՝ խթանելով զբոսաշրջությունը և նորարարությունը: Դա հնարավոր կլինի իրագործել ա) Հայաստանի հյուսիսային շրջաններում նորարարական, փոխակերպումներ առաջ բերող զբոսաշրջային ձեռնարկությունների հիմնման, բ) բարձր տեխնոլոգիաների և նորարարության բնագավառում գործող ձեռնարկություններին աջակցության տրամադրման գ) բարձր տեխնոլոգիաների ոլորտում հետազոտություններ իրականացնող գիտնականների միջև, միջազգային մակարդակում փորձի փոխանակման, ինչպես նաև դ) ուսանողների և բնակչության լայն շրջանում ձեռնարկատիրական մշակույթի զարգացմանը նպաստող ցանցերի ձևավորման միջոցով:

Միջոցառումների համառոտ նկարագրություն. ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի ուշադրության կիզակետում է երկու հիմնական ուղղություն (բաղադրիչ). **նորարարական զբոսաշրջության և ստարտափերի, ինչպես նաև արդեն իսկ գործող, ներդրումային տեսանկյունից հեռանկարային նորարարական ձեռնարկությունների զարգացումը:** Կիրառվող մեթոդների շարքում են դրամաշնորհային մրցույթները, փորձագետների կողմից տրամադրվող տեխնիկական աջակցությունը, համայնքի և շահառուների մասնակցության ապահովումը և ձեռնարկատիրական էկոհամակարգի զարգացումը:

Առաջին բաղադրիչ. **ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմ Հայաստանի համար»** բաղադրիչի ուշադրության կենտրոնում զբոսաշրջության ոլորտում ընդլայնված առաջարկների մշակումն է՝ հատկապես հյուսիսային շրջանների համար, ինչը կհանգեցնի հուսալի աշխատատեղերի ստեղծման, կայուն բիզնես գործունեության և պատասխանատու զբոսաշրջության դրական ազդեցության: Նախատեսվում է ֆինանսական/ դրամաշնորհային երեք սխեմաների մշակում և իրագործում՝ ուշադրության կիզակետում պահելով զբոսաշրջային ձեռնարկությունները: Ավելին, այն ներառում է Զբոսաշրջության կոմիտեի հզորացում, այդ թվում նաև աջակցության տրամադրում՝ միտված տվյալների վրա հիմնված զբոսաշրջային մարքեթինգային գործունեությանը:

Երկրորդ բաղադրիչ. **ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար»** բաղադրիչի ուշադրության կիզակետում է նաև փոխակերպող ՓՄՁ-ների ստեղծումը և զարգացումը՝ նպատակ հետապնդելով հնարավորություններ ստեղծել տնտեսական աճի դիվերսիֆիկացման համար: Ծրագիրը կաջակցի նաև ձեռնարկատիրական էկոհամակարգերին ու տեխնոլոգիական ուղղվածության ձեռնարկություններին՝ դրամաշնորհային սխեմաների, ինչպես նաև գիտական, կրթական և գործարար ոլորտների միջև համագործակցության միջոցով, ընդգրկելով նորարական գաղափարներով օժտված ուսանողներին ու նպատակ հետապնդելով ընդլայնել մասնակցությունը՝ Հորիզոն 2020 դրամաշնորհային մրցույթներում:

II. Դրամաշնորհային սխեմայի նպատակն ու թիրախային խումբը

«ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության «Covid-19-ի պայմաններում նորարարական տուրիզմին ուղղված դրամաշնորհների մրցույթի» նպատակն է աջակցել Հայաստանի տուրիզմի ոլորտին՝ արձագանքելու Covid-19-ի մարտահրավերներին՝ տրամադրելով ֆինանսական օժանդակություն (դրամաշնորհներ) տուրիզմի ոլորտում գործող ձեռներեցների և տուրիստական ընկերությունների, ոչ-պետական կազմակերպությունների և հիմնադրամների կոնսորցիումների, որոնք գործում են Հայաստանի հյուսիսային երեք մարզում հետևյալ նպատակներով՝

- Արձագանքելու ճգնաժամին և իրականացնելու վերականգնողական աշխատանքներ
- Պահպանելու և ավելացնելու արդյունավետությունն ու մրցունակությունը
- Օպտիմալացնելու բիզնես գործընթացներն ու բիզնես մոդելները
- Մշակելու նոր և արդիականացնելու առկա պրոդուկտներն ու շուկայավարման գործողությունները
- Բարելավելու հմտություններն ու որակավորումները

Դրամաշնորհային սխեմայի երկու պատուհանների թիրախային խմբերն են՝

- Զբոսաշրջության ոլորտում գործող ընկերություններ
- Զբոսաշրջության ոլորտի ընկերությունների, ՀԿ-ների և հիմնադրամների կոնսորցիումներ

Նշում. Կոնսորցիումը պետք է կազմված լինի մեկ գլխավոր դիմող կազմակերպությունից և առավելագույնը ևս չորս դիմող կազմակերպությունից: Վերջիններս կներկայացվեն դիմող գլխավոր կազմակերպության կողմից դիմումի ներկայացման, պայմանագրային և դրամաշնորհի տրամադրման գործընթացներում:

III. Դրամաշնորհի չափը

Առավել կենսունակ և իրագործման համար առավել պատրաստի լուծումներին դրամաշնորհը կտրամադրվի հետևյալ կերպ.

I. **Պատուհան 1**

- **Զբոսաշրջության ոլորտում գործող ընկերություններ**

- Մեկ դրամաշնորհի առավելագույն բյուջեն՝ մինչև 8,000 եվրո
- Դրամաշնորհառուների թիվը՝ մինչև 25

II. **Պատուհան 2**

Զբոսաշրջության ոլորտի ընկերությունների, ՀԿ-ների և հիմնադրամների կոնսորցիում

- Մեկ դրամաշնորհի առավելագույն բյուջեն՝ մինչև 20,000 եվրո
- Դրամաշնորհառուների (դրամաշնորհ ստացող կոնսորցիումներ) թիվը՝ մինչև 5

Ծրագրի դրամաշնորհի ֆինանսավորման ժամկետը 6 ամիս է՝ դրամաշնորհային պայմանագրի մեկնարկից հետո:

IV. Համապատասխանության պահանջներ և թույլատրելի ծախսեր

Այս մրցույթը բաց է ողջ Հայաստանից դիմող կազակերպությունների համար, ովքեր իրենց ծրագրով թիրախավորում են Հայաստանի հյուսիսային երեք մարզերը: Կդիտարկվեն միայն այն դիմումները, որոնք նպաստում են **Տավուշում, Լոռիում և Շիրակի մարզերում** տուրիզմի զարգացմանը:

Դիմորդները պետք է բավարարեն **համապատասխանության հետևյալ նվազագույն պահանջներին,** որպեսզի վերջիններիս դիմումները հաշվի առնվեն՝

- Ընկերությունը պետք է գրանցված լինի որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում:
- Ընկերությունը չպետք է գտնվի լուծարման կամ սնանկության գործընթացներում:
- Դիմորդները և թիմի անդամները պետք է լինեն ՀՀ քաղաքացիներ կամ ունենան մշտական բնակության կարգավիճակ Հայաստանում:

Թույլատրելի/ընդունելի ծախսեր դրամաշնորհի սահմաններում (վերաբերում է երկու պատուհաններին)

Ներդրումային բոլոր ծախսերը՝ ուղղված գործողություններին/գնումներին, որոնք անհրաժեշտ են բարելավելու կատարողականը, բարձրացնելու արդյունավետությունը և մրցունակությունը, համարվում են իրավասու և ընդունելի: Դրանք են՝

- Սարքավորումներ, ծրագրեր, վկայագրեր
- Բիզնեսի զարգացման ծախսեր՝ մարքեթինգ և վաճառք, իրավաբանական խորհրդատվություն, հաշվապահություն, այլ ծառայություններ և ծախսեր
- Ճամփորդական ծախսեր ընդունելի դեպքերում՝ համաձայն ԳՄՀԸ-ի կանոնների
- Ծրագրին վերաբերող գործառնական ծախսեր, ինչպիսիք են աշխատակազմի ծախսերը, գրասենյակի վարձակալության ծախսերը, կոմունալ ծառայությունները, հաղորդակցման ծախսերը, մատակարարման ծախսերը և այլ գործառնական ծախսեր, որոնք պետք է կազմեն
    - ընդհանուր բյուջեի մինչև 30%-ը
    - կատարվեն գործառնական հիմունքներով
- Ծրագրին վերաբերող տեխնիկական աջակցության ծախսեր (այսինքն՝ ուսուցում, քոուչինգ), որոնք պետք է կազմեն
    - Նվազագույնն ընդհանուր բյուջեի 15%-ը

- Կատարվեն պարտադիր կերպով

Անընդունելի ծախսեր՝

- Պարտքեր և վնասի փոխհատուցում
- Փոխառություններ երրորդ կողմին

V. Հիմնական ֆոկուս ոլորտները և գնահատման չափանիշները

Առաջարկը պետք է ցույց տա, թե ինչպես է այն նպաստելու հետևյալ չափանիշներին՝

1. Նորարարական պրոդուկտների /բիզնես մոդելների մշակում և/ կամ կատարելագործում, որոնք համապատասխանում են փոփոխվող պահանջարկին, օր.՝ տեղական պահանջարկի հասցեագրում
2. Տեխնիկական լուծումներ՝ պրոդուկտը կամ առաջարկը թարմացնելու և (կամ) ապահովելու հասանելիություն դեպի շուկաներ, ցանցեր, խորհրդատվություն, կրթություն և որակավորում ստանալուն
3. Հմտությունների և որակավորումների կատարելագործում՝ շուկայի հետագա փոփոխություններին հարմարվելու համար, հատկապես աճող թվայնացմանը
4. Բիզնես գործընթացների և ընդհանուր կատարողականի օպտիմալացում, օրինակ. գործառնություններ, ծախսերի և եկամուտների կառավարում, կադրերի կառավարում, ավտոմատացում / թվայնացում
5. Մարքեթինգային / ռեբրենդինգին ուղղված գործողությունների մշակում և իրականացում ուղղված փոփոխական և այլընտրանքային շուկաներին օր.՝ ներքին շուկային և սփյուռքին

Բոլոր դիմումները կգնահատվեն ստորև նշված չափանիշներին համապատասխան՝

Գնահատման չափանիշներ	Նվազագույն միավոր (1) Առավելագույն միավոր (8)	Կշիռ	Ընդհանուր
COVID-19-ի մարտահրավերների լուծման և հմտությունների ու որակավորումների կատարելագործման հավանականությունը՝ ճգնաժամից հետո		2	
Արտադրողականության բարելավման և ընկերության մրցունակության բարձրացման հավանականությունը		2	
Առավել արդյունավետ ծառայությունների տրամադրման և ավելի շատ հաճախորդների ներգրավման հավանականությունը		2	

Տեղական տուրիզմի աճին (քանակական կամ որակական) նպաստելու հավանականությունը		2	
Տուրիզմի արժեշղթայում այլ դերակատարների համար օգուտների ստեղծման հավանականությունը		1	
Կայունության և ներառական մոտեցման հասցեագրումը		1	
Նորարարության մակարդակը (այսինքն՝ նոր և/կամ ավելի արդյունավետ մոտեցումներ, մեթոդներ, նորարարական տեխնոլոգիական կամ ոչ տեխնոլոգիական լուծումներ, թվային ծրագրեր)		2	
Թիմի կազմը և կարողությունների մակարդակը ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար		1	
Դրամաշնորհային ծրագրի սխեմայի նպատակների իրագործելիությունն ու համապատասխանությունը		2	
Առաջարկվող ծրագրի գործողությունների ծախս-օգուտի վերլուծություն		1	

VI. Ներկայացման պահանջները

Ակնկալվում է, որ հետաքրքրված դիմորդները մանրամասնորեն կուսումնասիրեն Առաջարկների վերաբերյալ հայտարարության ձեռնարկը՝ նախքան իրենց դիմումները պատրաստելը և ներկայացնելը: Դիմումները, որոնք կներկայացվեն վերջնաժամկետից ուշ, կլինեն թերի կամ չեն համապատասխանի նշված պահանջներին, կարող են մերժվել:

Առաջարկների ընդունման սույն հայտարարության թողարկումը չի ենթադրում ԵՄ-ն՝ բիզնեսի համար «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի կողմից պարգևատրման պարտավորություն, կամ հայտի պատրաստման և ներկայացման հետ կապված ծախսերի փոխհատուցում:

Դիմումները պետք է ներկայացվեն **անգլերեն** լեզվով, հետևյալ էլ. հասցեին՝ tourism@tourismtech.am.

Ձեռագիր ներկայացած դիմումները չեն ընդունվի:

Դիմումները ներկայացնելիս դիմող կազմակերպությունները պետք է հետևեն բոլոր հրահանգներին, ձևաթղթերին և առանձնահատկություններին: Նշված ժամկետում բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունն ու փաստաթղթերը պարունակող դիմում-փաթեթ չներկայացնելը կարող է հանգեցնել առաջարկի մերժմանը:

Ստորև ներկայացվող դիմումի փաթեթն անհրաժեշտ է ուղարկել էլ.փոստով: Բնօրինակ փաստաթղթերը կպահանջվեն ըստ անհրաժեշտության:

Դիմումի փաթեթ	Տեղեկություն
Ծրագրի նկարագրության ներկայացման ձև	Կցված է հայտարարությանը՝ որպես առանձին հավելված
Բյուջեի ներկայացման ձև	Կցված է հայտարարությանը՝ որպես առանձին հավելված
Ինքնահայտարարագիր	Կցված է հայտարարությանը՝ որպես առանձին հավելված
Ծրագրի թիմի անդամների CV-ները, որոնք կներկայացնեն անհրաժեշտ հմտություններն ու փորձն առաջարկվող ծրագրի իրականացման համար	Հատուկ ձևաչափ չի պահանջվում
Ընկերության գրանցման տեղեկանք	Գրանցման տեղեկանքի սկանավորված տարբերակը

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է ս.թ. հունիսի 28-ը, Երևանի ժամանակով 23:59-ը:

Խստորեն խորհուրդ է տրվում դիմել մինչև նշված վերջնաժամկետը, որպեսզի փաստաթղթերը վերբեռնելու հետ կապված որևէ տեխնիկական դժվարություն չառաջանա:

Հարցեր կարող եք ուղղել էլ. փոստով ս.թ. հունիսի 15-19-ը ներքոնշյալ էլ. հասցեին՝ հստակ կերպով նշելով առաջարկների հայտարարության անվանումը: Հարց ու պատասխանի ժամկետի ավարտից հետո բոլոր հարցերը կմիավորվեն և կհրապարակվեն հետաքրքրվող դիմորդների համար:

Էլ. հասցե՝ tourism@tourismtech.am

VII. Դրամաշնորհի սխեմայի ժամանակացույցը

Դիմումների ներկայացման, ընտրության և իրականացման ժամանակացույցը հետևյալն է՝

հունիսի 8, 2020 թ.	Առաջարկների հայտարարության մեկնարկ
հունիսի 15-19, 2020 թ.	Հարց ու պատասխանի ժամանակահատված
հունիսի 28, 2020 թ.	Առաջարկների ներկայացման ավարտ
հուլիսի 17, 2020 թ.	Հաղթողների ընտրություն և դրամաշնորհի հանձնում
օգոստոսի 10, 2020 թ.	Պայմանագրի մեկնարկ (պլանավորված)
փետրվարի 10, 2021թ.	Պայմանագրի ավարտ (պլանավորված)

VIII. Առաջարկների ընտրության գործընթաց

Ներկայացված բոլոր առաջարկները կգնահատվեն հետևյալ քայլերի համապատասխան՝

ՔԱՅԼ 1. Վարչական ստուգում

- Վերջնաժամկետը պահպանվել է
- Պահանջվող տեղեկատվությունը ճիշտ և ամբողջական է
- Իրավասության նվազագույն պահանջները բավարարված են

ՔԱՅԼ 2. Առաջարկի գնահատումը

Վարչական ստուգումից հետո դիմումների բովանդակային գնահատումը կկատարի «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության «Covid-19-ի պայմաններում նորարարական տուրիզմին ուղղված նպատակային դրամաշնորհների մրցույթի» հանձնաժողովի կողմից: Կիզակետում կլինեն դիմողների և նրանց հետ համա-դիմող կողմերի (գործընկերների) կարողությունները, ինչպես նաև ներկայացրած օժանդակ փաստաթղթերի հետ համադրված նախագծային առաջարկների որակը: Բոլոր համապատասխանող առաջարկությունները կգնահատվեն ընտրող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից, որտեղ միջին միավորը համարվելու է որպես ծրագրի դասակարգման հիմք:

«ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության «Covid-19-ի պայմաններում նորարարական տուրիզմին ուղղված նպատակային դրամաշնորհների մրցույթի» հանձնաժողովի կազմը հետևյալն է՝

- Մեկ ներկայացուցիչ ՀՀ Զբոսաշրջության պետական կոմիտեից
- Երկու ներկայացուցիչ ԳՄՀԸ հայաստանյան գրասենյակից

IX. Պայմանագրի կնքումը, ֆինանսավորման և վճարման եղանակները

Եթե նախորդ վճարման առնվազն 80% -ը փոխանցվել է մինչև հաջորդ վճարման ամսաթիվը, կարելի է դիմել հաջորդ կանխավճարի համար: Առաջին կանխավճարից հետո հետագա կանխավճարային դիմումները պետք է ուղեկցվեն ֆինանսական հաշվետվությամբ, որը հաստատում է նախորդ վճարման օգտագործումը (կապալառուն պետք է տրամադրի հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրեր, օրիգինալ բանկային հաշվետվություններ և բոլոր այլ օժանդակ փաստաթղթերը), որոնք պետք է համապատասխանեն դրամաշնորհային սխեմայի պահանջներին: . Մինչև պայմանագրի կնքումը կատարված ծախսերից ոչ մեկը չի ճանաչվի որպես հաճախորդի ներդրում: Ներդրումների և վճարումների համար կարելի է ծախսեր կատարել միայն պայմանագրի կնքումից հետո:

Ծրագիրը համապատասխան վճարումները կփոխանցի շահառուների հատուկ բանկային հաշիվներին: Դրամաշնորհային ծրագրերին վերաբերող բոլոր վճարումները ևս պետք է կատարվեն հատուկ բանկային հաշվի միջոցով:

Դրամաշնորհ ստացողները իրավունք չունեն ստացված միջոցները կամ դրա մի մասը փոխանցել այլ կողմերի: Յուրաքանչյուր ծրագրի պայմանագրում ժամկետների վերաբերյալ մանրամասներ կհրապարակվեն՝ հիմնվելով տվյալ ծրագրի առանձնահատկությունների վրա: Դրամաշնորհ ստացողներն իրավունք չունեն ստանալու կամ դիմելու որևէ այլ ֆինանսավորման՝ այս դրամաշնորհային հայտի առարկա հանդիսացող և ծրագրում նշված գործողությունների/ աշխատանքների իրականացման համար:

Պայմանագրի սկիզբ կհամարվի 2020 թվականի օգոստոսի 10-ը իսկ ավարտը՝ 2021 թվականի փետրվարի 10-ը (ամսաթվերը կարող են տարբեր լինել `կախված իրական պայմանագրի մեկնարկի և ավարտի ամսաթվից): Այս ժամանակահատվածում կատարված ծախսերի համար բոլոր վճարումները պետք է կատարվեն մինչև պայմանագրի ավարտը: Այս ժամանակահատվածից դուրս կատարված և վճարված ծախսերը չեն կարող ֆինանսավորվել դրամաշնորհից: Ֆինանսական և բովանդակային հաշվետվությունները պետք է ներկայացվեն պայմանագրի ավարտի պահից երկու շաբաթվա ընթացքում:

Դրամաշնորհի սահմաններում ֆինանսավորվող մատակարարումների և ծառայությունների համար պայմանագրեր կնքելիս Ստացողը պահպանում է ՀՀ-ում

սահմանված կանոնակարգերը և դրամաշնորհային պայմանագրում նշված դրույթները, որոնք սահմանում են նվազագույն չափանիշներ:

X. Ծրագրի իրականացում, հաշվետվություն և մոնիտորինգ

Ֆինանսավորումը սկսելուց անմիջապես հետո, դիմորդները պետք է սկսեն իրականացնել իրենց ծրագրերը `հիմնվելով պայմանագրում ներառված ժամկետների և կետերի վրա: Դիմորդները պետք է ներկայացնեն ծրագրի իրականացման հաշվետվություն՝ կատարված ծախսերը հիմնավորելով համապատասխան հաշիվ-ապրանքագրերով և քաղվածքներով:

«ԵՄ-ն՝ բիզնեսի համար նորարարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում» ծրագիրը կիրականացնի մոնիտորինգ տեղում յուրաքանչյուր դրամաշնորհային պայմանագրի վերաբերյալ: Այս առումով ծրագիրն իրավունք ունի իրականացնել մոնիտորինգ և ստուգումներ տեղում՝ դրամաշնորհի շահառուների շինությունում/տարածքում:

Դրամաշնորհառուների մոնիտորինգը պետք է սահմանվի նաև նախատեսված դրամաշնորհային պայմանագրերով:

Հավելված 1. Ծրագրի նկարագրության ներկայացման ձև

Առաջարկների ներկայացման այս մրցույթին մասնակցելու համար դիմող կազմակերպությունները կամ գլխավոր կազմակերպությունը կոնսորցիումի դեպքում, պետք է տեղեկատվություն տրամադրի կազմակերպության/կազմակերպությունների մասին՝ ինչպես նշված է Ծրագրի նկարագրության ներկայացման ձևի մեջ:

Խնդրում ենք **ներբեռնել Ծրագրի նկարագրության ներկայացման ձևը (հասանելի միայն անգլերեն լեզվով)**, որը կցված է այս հայտարարության հետ, լրացրեք այն և կցեք ձեր դիմումի փաթեթին:

Հավելված 2. Բյուջեի ներկայացման ձև

Խնդրում ենք **ներբեռնել Բյուջեի ներկայացման ձևը (հասանելի միայն անգլերեն լեզվով)**, որը կցված է այս հայտարարության հետ, լրացրեք այն և կցեք ձեր դիմումի փաթեթին:

Հավելված 3. Ինքնահայտարարագրման ձև

Խնդրում ենք **ներբեռնել Ինքնահայտարարագրման ձևը (հասանելի միայն անգլերեն լեզվով)**, որը կցված է այս հայտարարության հետ, լրացրեք այն և կցեք ձեր դիմումի փաթեթին: